ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Համագործակցային մեթոդի կիրառությունը սովորողների ներգրավվածության բարձրացման գործում »

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Կարինե Ավագյան

ԴՊՐՈՑ՝ «Վաղաշենի մ/դ»

2022 Թ.

ՄԱՐՏՈՒՆԻ

Բովանդակություն

1.Ներածություն.....3

2.Գրական ակնարկ.....7

3.Փորձարարական հետազոտություն.....10

3.1.Փորձարարական դասարանի նկարագիր..... 11

3.1.1 Փորձարարական դաս 1.....11

3.1.1 Փորձարարական դաս 2.....12

7.Եզրակացություն.....14

8.Գրականության ցանկ.....16

9.Հավելված.....17

1.Դասապլան-1.....17

2.Դասապլան-2.....20

1.Ներածություն

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն:

Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնալու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների և ժամանակակից մանկավարժների աշխատանքներում : Փոքր խմբային աշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ: Դրանք են՝

- Աշակերտների թիմային առաջադիմություն,
- Խճանկար,
- Շրջվիր դեպի զույգդ,
- Պրիզմա,
- Խմբային հետազոտություն,
- Շրջագայություն պատկերասրահում և այլն:

Այս հետազոտական աշխատաքում կներկայացնեմ համագործակցային ուսուցման տեսության զարգացման և գործնական կիրառությունների մասին հարցերը: Հիմնվելով ժամանակակից մանկավարժական տեսությունների և նախորդ

մշակումների վրա՝ կոնկրետ դասի օրինակով կներկայացվեն և կվերլուծվեն մի քանի մեթոդներ և մասնակցությունը խթանող միջոցներ:

Նախևառաջ մեզ հետաքրքրում է այն հարցը, թե հնարավո՞ր է համագործակցային ուսուցման տարրերի և միջոցների կիրառելիության միջոցով աշակերտների մոտ զարգացնել դրական փոխկապակցվածություն, անձնական պատասխանատվություն, դեմ առ դեմ փոխազդեցություն, սոցիալական հմտություններ, խմբային համագործակցության գաղափարներ:

Ցանկանում ենք անդրադառնալ բարեփոխումների պահանջով առաջադրված համագործակցային միջոցների կիրառման արդյունավետությանը և որքանո՞վ է առաջադրված փորձը նպաստելու նշյալ հմտությունների զարգացմանը: Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը:

Հասարակական բոլոր փոփոխությունները անդրադառնում են նաև կրթական համակարգին: Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով: Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Հասարակաությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը: Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ համագործակցային մեթոդների, հնարների, փոքր աշխատանքային խմբերի արդյունավետ կիրառելիությանը: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրուևության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը,ալև արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը:

Ուստի մեր խնդիրն է ռուսաց լեզվի դասաժամերին համագործակցային ուսուցման շնորհիվ աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում: Աշխատանքում կխոսենք Սահլբերգի կողմից առաջադրված մասնակցությունը խթանող տարբեր միջոցներից մեկի, զույգերով

աշխատանքի, «Շրջվիր դեպի զույգդ» և շատերի կողմից կիրառվող «Պրիզմա» մեթոդի կիրառելիության և արդյունավետության մասին:

Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն:

Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝ դասի տիպից ու կառուցվածքից, ուսումնական նյութի բովանդակությունից, աշակերտների տարիքից, դասարանում աշակերտների թվաքանակից, պատրաստվածության մակարդակից, շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից, ուսումնադիտողական պարագաների առկայությունից , ժամաքանակից, ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժևորման համար, ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը :



Գծապատկեր 1. Համագործակցային ուսուցման տարրերը

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմանական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է:

Համագործակցային աշխատանքի առավելությունները: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել:Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ): Համագործակցային ուսուցման իմաստն է՝

- Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:
- Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցելու :

Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանցմղել ենք արդյունավետ համագործակցության: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում:

Շատ են պատահում դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում: Առաջադրանքը, մեթոդը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին

Փոքր խմբերով աշխատելու առավելությունները: Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը:

Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից:

Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է , որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով:: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին:

Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձևերի կիրառումը:Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) խմբի հետ, ապա աշակերտները արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են:

Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները .

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն,
- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,
- խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,
- քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների համոզմունքները,
- ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

Այսօր հանրակրթական դպրոցների մեծ մասում դասարանների խտությունը անցնում է 20-25 (որոշ տեղերում՝ 30-34): Ոչ բոլոր դպրոցներն ունեն համապատասխան կահավորում և պայմաններ: Դասարաններում չկան շարժական սեղաններ, խմբային աշխատանքի համար նախատեսված պարագաներ, կապի առկայություն, տեսացրիչ, էլեկտրոնային գրատախտակ և այլն: Ուստի առաջարկում ենք պատմության դասերին 20 և ավելի աշակերտ ունեցող դասարաններում կիրառել «Ծրջվիր դեպի զույգդ» մեթոդը:Այս մեթոդը հնարավորություն է տալիս խուսափել դասաժամին ավելորդ աղմուկից, տեղաշարժից և խառնաշփոթից: Աշխատանքային դիրքը լինում է՝ «աչք աչքի», «երես երեսի»: Դեմ առ դեմ գտնվողները կարողանում են հեշտությամբ տեսնել և լսել մեկը մյուսին:Հաղորդակցումը կատարվում է խոսքով, աչքերով: Այստեղ կարևոր է աշակերտներին դիմել պատահական ընտրությամբ՝ հնարավորություն տալով նրանց ներկայացնելու իրենց պատասխանները ամեն քննարկումից հետո:Նման անհատական պատասխանատվությունը ավելի զգոն է դարձնում զույգին, և աշակերտներն ավելի լրջությամբ են մոտենում առաջադրանքին և ստուգում միմյանց՝ համոզվելու համար, թե արդյո՞ք երկուսն էլ պատրաստ են պատասխանելու, թե ոչ: Այս մեթոդը ուսուցչին հնարավորություն է տալիս անարգել շրջել դասարանում, տալ անհատական հրահանգներ և առանձին մոտեցում ցուցաբերել խմբերին: Այս ժամանակ աշխատանքային աղմուկը կառավարելի է, իսկ աշխատանքային խմբերը չեն խանգարում իրար:

Փորձարարական հետազոտություն

Հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ Վաղաշենի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանը: Դասարանում սովորում են քսաներկու աշակերտ՝ ինը տղա և տասներեք աղջիկ: Քանի որ աշակերտների մոտ թույլ է խոսքի և հաղորդակցման հմտությունները, պատմելու և վերապատմելու ունակությունները, ինչպես նաև կապակցված խոսք կազմելու կարողությունը, որոշեցի համագործակցային մեթոդը կիրառել:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել համագործակցային մեթոդի ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար: Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավածության բարձրացման համարհետաղոտված փորձարարական դասերի ընթացքում կիրառել եմ համագործակցային մեթոդներ:

Ինտերակտիվ մեթոդներով աշակերտները ավելի հեշտ են ընկալում նյութը և կատարում համապատասխան առաջադրանքը ի տարբերություն նյութի բովանդակային վերարտադրմանը: Դասերի ընթացքում կիրառել եմ հետևյալ մեթոդները՝ մտագրոհ, ԳՈՒՍ, քարտեզագրում, Տ-աձև աղյուսակ, ՓԳՀ-նշաների համակարգ:

Փորձարարական դասարանի նկարագիր

Փորձարարական դասեր իրականացնելու համար ընտրել եմ Գեղարքունիքի մարզի Վաղաշենի դպրոցի 6-րդ դասարանը, որտեղ և աշխատում եմ : Դասարանի աշակերտներին արդեն 4 տարի է դասավանդում եմ ռուսաց լեզու առարկան : Դասարանը ռուսաց լեզվի ժամին կիսվում է : Իմ խմբում կան 15 աշակերտներ՝ 10 տղա 5 աղջիկ: Ընդհանուր առմամբ միջին կարողությունների տեր աշակերտներ են: Դասարանում չկան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ չկան , ուսուցման, ընկալման դժվարություններ ևս:

Փորձարարական դաս 1

Իմ ընտրած առաջին թեման ՝ Հայաստանի հրաշալի անկյունները (Чудесные уголки Армении) դասն է : Թեման բավականին մատչել էր ու հասկանալի: Խթանման փուլում՝ Հայաստանի առանձին վայրերի հասկացության տակ հավաքագրեցի մտքերը, առանց մեկնաբանության: Իմաստի ընկալման փուլում կատարեցինք խմբային աշխատանքի/3 խումբ/, որի միջոցով դասի համապատասխան բաժինները սովորեցին և յուրացրին դասարանում: Կշռադատման փուլում կատարեցի առաջադրանքների հարցադրում: Սովորողները կատարեցին հանձնարարած աշխատանքը:

Աշակերտները պատասխանեցին և ընթանրացրին իրենց տեսակետները թեմայի վերաբերյալ: Ամփոփելուց հետո սկսեցինք աշխատել գրատախտակի մոտ փակցրած նկարների միջոցով ներկայացնելով Հայաստանի տեսարժան վայրերը և մշակութային արժեքները: Դասը քննարկելուց հետո գրատախտակին գրվեցին մի քանի արժեքներ արտահայտող բառեր:

Ընդհանուր առմամբ դասն անցավ բավական հետաքրքրված՝ դա էին փաստում աշակերտների մեծ մասի ներգրավվածությունը դասապրոցեսին:Դասի ավարտին կատարեցի գնահատում և տնային հանձնարարություն տվեցի:

Փորձարարական դաս 2

Երկրորդ թեման ՝ <Знаки препинания: повествовательное, восклицательное, вопросительное предложение. Знаки препинания в конце предложения> դասն է :

Թեման բավականին մատչել էր ու հասկանալի: Դասի համար սահմանել էի հետևյալ վերջնարդյունքները՝

- Աշակարետները կտարբերեն պատմողական, հարցական և բացականչական նախադասությունները
- Կկարողանան ճիշտ արտասանել նախադասությունները
- Կկարողանան գրավոր խոսքում ճիշտ կետադրել

Խթանման փուլի համար գրատախտակին փակցրեցի միևնույն նախադասությունը արտահայտող երեք տարբեր նկարներ՝ բացականչական, հարցական և պատմողական երանգներով՝ աշակերտների ուշադրությունը սևեռելով կետադրական նշաններին: Իմ ուղղորդող հարցերի միջոցով փորձեցի պարզել դրանց տարբերությունները:

Խթանման փուլից հետո սահուն անցում կատարեցի նոր նյութի ներկայացմանը: Նոր նյութի ներկայացումը իրականացրեցի «Կենտրոններով աշխատանք» մեթոդի միջոցով:

Աշակերտները բաժանվումեն 4 խմբի համապատասխան կենտրոններով: Առաջինը՝ նյութը ներկայացնողների կենտրոն: Այս խմբին տրվում է տեքստ-երկխոսություն, ովքեր պետք է ճիշտ առոգանությամբ ներկայացնեն այն:

Երկրորդ՝ բացահայտողների կենտրոն: Այս խումբը պարզում է, թե ինչ նախադասություններ են կիրառված տեքստ-երկխոսության մեջ և ինչ են արտահայտում այդ նախադասությունները:

Երրորդ՝ ստեղծագործողների կենտրոն: Այս խումբը փորձում է տրամաբանական շարունակություն տալ երկխոսությանը և կատարել համապատասխան դերային բեմականացում:

Չորրորդ՝ գրավոր աշխատանքի կենտրոն: Այս խմբի մասնակիցները գրատախտակին գրում են տեքստ-երկխոսության պատմողական, հարցական և բացականչական նախադասությունները և ներկայացնում դրանց վերջում դրվող կետադրական նշանները և նորից բացատրում դրանց տարբերությունները:

Ամբողջ աշխատանքը իրականացվեց իմ ուղղորդմամբ: Հետաքրքիր համագործակցային աշխատանք ստացվեց : Այնուհետև աշխատանքն ամփոփեցինք ամբողջ դասարանի սովորողների օգնությամբ :

Գործնական աշխատանքի համար նախատեսել էի իրավիճակների դերային քննարկման կազմում խմբերում: Իրավիճակներ, որի շուրջ աշակերտները պետք է կազմեն կարճ դերային երկխոսություն՝ գործածելով վերը նշված նախադասության տեսակները: Օրինակ՝ Դուք ուշացած մտել եք դասարան, կազմեք երկխոսություն: Մի աշակերտը ուսուցիչն է, մյուսը՝ աշակերտ:

Տնային աշխատանքի հանձնարարում և ամփոփում: Աշակերտներին բաժանեցի փոքր տեքստեր չկետադրված նախադասություններով: Աշակերտները տանը պետք է լրացնեն բաց թողնված նշանները:

Եզրակացություն

Առաջին դասի ժամանակ ես պարզեցի ,որ կա ինքնուրույն աշխատելու, ինքնուրույն դրսևորվելու թույլ աշակերտներ:

Այդ նպատակով որոշեցի կիրառել. դասի ոչ ավանդական ձևերը նրանց մոտ ստեղծագործական կարողությունները, երևակայությունը,կապակցված խոսք կազմելու,վերարտադրելու կարողությունները զարգացնելու համար:

Յուրաքնչյուր դասից հետո աշակերտների մոտ նկատվել են ակտիվություն,ինքնուրույն դրսևորվելու առաջընթաց,նրանք սկսեցին ավելի ազատ շարադրել իրենց մտքերը: Կարողացան հեշտությամբ աշխատել բնագրի հետ:Գործնական աշխատանքի շնորհիվ նրանց մոտ ձևավորվել է կապակցված խոսք կազմելու,վերարտադրելու կարողություններ:Աշակերտների համար մեծ հետաքրքրություն,ակտիվություն առաջացավ ներկայացնելու իրենց իսկ ցանկության Հայաստանի տարբեր շրջանների մասին գրել գործնական աշխատանք:Սահիկաշարի պատրաստումը նպաստեց նրան,որ երեխաները ավելի ոգևորվեցին:

Երկրորդ դասի նոր նյութի ներկայացման փուլում կիրառվել է «Կենտրոններով աշխատանք» համագործակցային մեթոդը: Այն հետաքրքիր է նրանով, որ ներառում է նոր նյութի ընկալում և կիրառում: Այսինքն իր մեջ ներառված է նաև գործնական աշխատանքը: Բացասական կողմերից է ժամանակատար լինելը: Թե մեթոդն է պահանջում շատ ժամանակ և թե խմբով աշխատելու փորձի պակասը: Այս պատճառով դասի ընթացքում ինքնուրույն աշխատանքի փուլը հանվել է, այն հանձնարարվել է որպես տնային աշխատանք: Նշենք, որ դասը հաջողված էր, կենտրոններով աշխատելիս աշակերտները սովորում էին նոր նյութը իրարից և անմիջապես այն կիրառում: Դասին ընդգրկված էին բոլոր աշակերտները:

Ելնելով տեսական վերլուծությունից և փորձարարական հետազոտության արդյունքների ամփոփից՝ հանգել եմ հետևյալ եզրակացությանը. Ցանկացած առարկայի շրջանակներում մեծ խնդիր է դպրոցահասակ երեխաների մոտ զարգացնել ինքնուրույն գործելու կարողությունը, վերլուծելու, ստեղծագործելու ունակությունը, որպեսզի նա ունենա ուրույն մտածողություն, վառ երևակայություն, ինքնազարգացման ու առաջընթացի մեծ ձգտում:

Ուսուցման գործընթացի կատարելագործման համար կարծում եմ անհրաժեշտ են կրթության կազմակերպման նորագույն ձևերի կառուցում, համագործակցային մեթոդների տեխնոլոգիաների կիրառումը , որը կհանգեցնի կրթության ոլորտի վերաիմաստավորմանը , համագործակցային հարաբերությունների ձևավորմանը և անհատականացված կրթական համակարգի վերաձևավորմանը: Աշխատանքի սկզբնական փուլում բնականաբար առաջանում են դժվարություններ, որոնք ազդում են տվյալ մեթոդի արդյունավետության , դասի որակի և աշակերտների կողմից նյութի յուրացման մակարդակի վրա , սակայն դրանք ժամանակի ընթացքում հաղթահարելի դժվարություններ են:

Դժվարություններից են՝ պլանի բաշխման , աշակերտների հարափոփոխ զույգերի կազմման և կազմած զույգերի փոփոխման ընթացքում, նրանց մեծամասնությունը դժվարությամբ են փոխում իրենց զույգերին: Հետևաբար աշակերտների մեջ անհրաժեշտ է զարգացնել համագործակցային մշակույթը առավել հաճախ համագործակցային խմբային մեթոդով աշխատանքներ կատարելու միջոցով:

Գրականության ցանկ

1. Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ.Մասնագիտական զարգացման ձեռնարկ 286 ուսուցիչների համար: Երևան: Կրթության ազգային ինստիտուտի հարատարակչություն: 2004: 178 էջ:

2.. Հովհանիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ: Երևան: «Անտարես»: 2006: 122 էջ:

3.Վեսա Պուրուկուրու Համագործակցային ուսուցում. վերապատրաստողի ուղեցույց: Երևան: «Անտարես»: 2006: 95 էջ:

Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Կարինե Ավագյան

Առարկա՝	**ռուսերեն**	**Ամսաթիվ**		**Դասարան**	6
Թեմա՝	Чудесные уголки Армении				
Օգտագործվող նյութեր՝	***Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան***				
Դասի նպատակը՝	**Սովորողները գաղափար կազմեն տվյալ թեմայի հասկացության մասին: Սովորեն և հասկանան նոր բառեր և արտահայտություններ, կատարեն վերլուծություններ, սերմանել և արժևորել հայրենիքի հանդեպ սեր և հարգանք:**				
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				
Վերջնարդյունքները	**Աշակերտները կկարողանան.** **Դասի ավարտին աշակերտը կկարողանա հասկանալ նոր թեմայում ամփոփված բառերը և արտահայտությունները և ամրապնդել դրանք:**				
Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Ուսումնական գործունեություն** ***Ուսուցիչ***		**Կիրառվողմեթոդ (ներ)**	
5րոպե-	**Բացել դասագրքերը, պատրաստվել**	**Ողջունել դասարանին, ն/բ:** **Ստուգել տնային աշխատանքները, բացատրել**			

սկիզբ **10րոպե-ընթացք**	**նոր դասին:** **Ներկայացնել տնային աշխատանքները** **Պատասխանել հարցերին** *Բաժանվել խմբերի* *Դասի համապատասխան հատվածը սովորել*	**անհասկանալի մասերը** **Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին** **Տալ ուղղորդող հարցադրումներ** **Որից հետո կատարվում է նոր դասի ծանոթություն հարց ու պատասխանի միջոցով**	***Հարցադրումների մեթոդ*** ***Խմբային համագործակցային աշխատանք***
15րոպե	*թույլ ունակություն ունեցող աշակերտները կատարում են նոր թեմայի վերաբերյալ տրված առաջադրանքները*	**Դասի ընթացքում անցկացվում է զրույց աշակերտների հետ Հայաստանի առանձին վայրերի և շրջանների հասկացության տակ հավաքագրվում են առանձին մտքեր աշակերտների մեկնաբանությամբ:**	***Տարբերակված ուսուցում***

12րոպե **3րոպե-ավարտ**	***Լուռ լսել դասը , կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատանք դասագրքի հետ***	**Բաժանել թեստերը, բացատրել հանձնարարությունները** **Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանվոր, գրավոր հետադարձ կապ:** **Հավաքել տարբերակված թեստերը** **Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն** **Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում**	***Կարճ դասախոսություն՝ստեղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու*** ***աշխարհագրություն, պատմություն, արվեստ)*** ***Անրադարձ***
Տնային աշխատանք	***Ինքնուրույն ընթերցել , թարգմանել և պատասխանել դասի վերջի հարցերին:***		

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Կարինե Ավագյան

Առարկա՝	**ռուսերեն**	**Ամսաթիվ**		**Դասարան**	6
Թեմա՝	Знаки препинания: повествовательное, восклицательное, вопросительное предложение. Знаки препинания в конце предложения.				
Օգտագործվող նյութեր՝	***Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան*** ***Նկարներ, Համակարգիչ, Պրոյեկտոր, Թղթերի վրա նախապես գրված բառեր***				
Դասի նպատակը՝	**Բառապաշարի և բանավոր խոսքի զարգացում,** **Տարբերել պատմողական, հարցական և բացականչական նախադասությունները Կարողանան գրավոր խոսքում ճիշտ կետադրել** **Կարողանան ճիշտ հնչերանգով արտահայտել նախադասությունները**				
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				
Վերջնարդյունքները	**Աշակարետները կտարբերեն պատմողական, հարցական և բացականչական նախադասությունները** **Կկարողանան ճիշտ արտասանել նախադասությունները** **Կկարողանան գրավոր խոսքում ճիշտ կետադրել**				
Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն**	**Ուսումնական գործունեություն** ***Ուսուցիչ***		**Կիրառվողմեթոդ(ներ)**	

	Աշակերտներ		
4րոպե-սկիզբ	**Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:** **Ներկայացնել տնային աշխատանքները** **Պատասխանել հարցերին** *Գտնում են տարբերությունները:*	**Ողջունել դասարանին, ն/բ:** **Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը** **Գրատախտակին փակցվում են միևնույն նախադասությունը արտահայտող երեք տարբեր նկարներ՝ բացականչական, հարցական և պատմողական երանգներով՝ աշակերտների ուշադրությունը սևեռելով կետադրական նշաններին: Ուսուցչի ուղղորդող հարցերի միջոցով փորձում են պարզել դրանց տարբերությունները:**	***Հարցադրումների մեթոդ***
25րոպե-ընթացք	*Բաժանվել 4 խմբերի* *Առաջինը՝ նյութը ներկայացնողների կենտրոն: Այս խմբին տրվում է տեքստ-երկխոսություն, ովքեր պետք է ճիշտ առոգանությամբ*	**Որից հետո կատարվում է նոր դասի ծանոթություն հարց ու պատասխանի միջոցով** **Ամբողջ աշխատանքը իրականացվում է ուսուցչի ուղղորդմամբ:**	***«Կենտրոններով աշխատանք»*** ***Խմբային*** ***համագործակցային աշխատանք***

	ներկայացնեն այն: Երկրորդ՝ բացահայտողների կենտրոն: Այս խումբը պարզում է, թե ինչ նախադասություններ են կիրառված տեքստ-երկխոսության մեջ և ինչ են արտահայտում այդ նախադասությունները: Երրորդ՝ ստեղծագործողների կենտրոն: Այս խումբը փորձում է տրամաբանական շարունակություն տալ երկխոսությանը և կատարել համապատասխան դերային բեմականացում: Չորրորդ՝ գրավոր աշխատանքի կենտրոն: Այս խմբի մասնակիցները գրատախտակին գրում են տեքստ-երկխոսության պատմողական, հարցական և		***Տարբերակված ուսուցում*** ***Կարճ դասախոսություն՝ս տեղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու աշխարհագրություն, պատմություն, արվեստ)***

Գործնական աշխատանք/14 րոպե/ **3 րոպե-ավարտ**	*բացականչական նախադասությունները և ներկայացնում դրանց վերջում դրվող կետադրական նշանները և նորից բացատրում դրանց տարբերությունները:* *Կազմել կարճ դերային երկխոսություններ:* *Աշխատանքի ներկայացում:* *Ամփոփում*	**Ուսուցիչը ներկայացնում է իրավիճակներ, որի շուրջ աշակերտները պետք է կազմեն կարճ դերային երկխոսություն՝ գործածելով վերը նշված նախադասության տեսակները: Օրինակ՝ Դուք ուշացած մտել եք դասարան, կազմեք երկխոսություն: Մի աշակերտը ուսուցիչն է, մյուսը՝ աշակերտ:** **Աշխատանքի արդյունքների հարցում:** **տնայինի հանձնարարում**	***Իրավիճակային երկխոսության կազմում*** ***համագործակցային ուսուցում*** ***ամփոփում***
Տնային աշխատանք	***Ինքնուրույն ընթերցել , թարգմանել և պատասխանել դասի վերջի հարցերին:***		